ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 սեպտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

123
(2973)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՍՊԱՅԿԱՆ» ՔՈՂՔԱՊԱՔԱՊԵՏԻ ՀՈՐ ԵՐԱՇԽԱՎՈՐՆ Է ԲԱՆԿՈՒՄ

Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի 71-ամյա թոշակառու հոր մեգա բիզնես նախագիծը ակնհայտորեն կոռուպցիոն տարրեր է պարունակում, սակայն, «Սիվիլնեթի» հրապարակումից մոտ կես ամիս անցնելուց հետո էլ, իրավապահները կամ կոռուպցիայի դեմ պայքարող պետական այլ կառույցները որեւէ քայլ չեն նախաձեռնել: Իսկ ինչպե՞ս է տեղի ունեցել խնդրահարույց մեգանախագծի հաստատումը. պարզվում է, որ նախկին իշխանությունների օրոք պետությանը 7 մլրդ դրամի (մոտ 17 մլն ԱՄՆ դոլար) վնաս պատճառած, ապա իր սխալն ընդունած եւ վնասները վերականգնած «Սպայկա» ընկերությունը, որը ՔՊ-ական իշխանության հետ արդեն ջերմ է ինչպես «նախկիններ»ի հետ, Երեւանի փոխքաղաքապետի ընտանիքի փաստացի տանիքն է: Ինքը՝ Արմեն Փամբուխչյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատել է, որ թոշակառու հոր վարկավորման երաշխավորը «Սպայկա» ընկերությունն է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Սպայկայի» սեփականատեր Դավիթ Ղազարյանը հաճախ է հյուրընկալվում Արմեն Փամբուխչյանին՝ ինչպես Երեւանի քաղաքապետարանում, այնպես էլ տանը: Եվ ակնհայտ է, որ Ղազարյանի «քաղաքական տանիքը» ՔՊ-ականների հետ հարաբերություններում, պետական ատյանների հետ հարցերը կարգավորելիս ապահովում է հենց Արմեն Փամբուխչյանը: Հիշեցնենք, որ Արմեն Փամբուխչյանի հայրը՝ Սոկրատ Փամբուխչյանը, որը մինչեւ որդու պաշտոնյա դառնալը երբեք որեւէ ընկերությունում տնօրեն կամ բաժնետեր չի եղել, անցած տարվա հուլիսին հիմնադրել է «Սանգարդեն» ընկերությունը: 71 ամյա պապիկը 40 հեկտար մակերեսով հողեր է ձեռք բերել Արմավիրի մարզի Շենիկ գյուղում, արդեն կառուցել է ջրավազան, իսկ նոյեմբերից կսկսի ծառատունկը: Բանկը նրան տրամադրել է 1,5 միլիարդ դրամի վարկ (մոտ 3.8 մլն դոլար) եւ միանգամից գրավադրել է Շենիկում նոր գնված հողամասերը: Պաշտոնյայի հոր վարկի մարման ժամկետը 2031 թվականի սեպտեմբերն է: Բացի արտոնյալ վարկից, որը տրամադրվել է 14 տոկոսով, Փամբուխչյանի հայրը նաեւ կառավարության հոգածությունից է օգտվել. 12 տոկոս մարումն իրականացնում է պետությունը, ինչը նշանակում է, որ Փամբուխչյանի հայրը 2 տոկոսով վարկ է ստացել մոտ 4 մլն ԱՄՆ դոլար: «Սանգարդեն»-ին տրամադրված վարկի սուբսիդավորումը նախարարության կողմից կազմել է 102,5 մլն դրամ: Այդ հողակտորների վրա դեղձի այգի է հիմնելու «Սպայկա» ընկերությունը, որը նաեւ կարտահանի դեղձերը: Ահա այսպիսի առերեւույթ կոռուպցիոն շղթա է գործում Նիկոլ Փաշինյանի հետհեղափոխական Հայաստանում:

5-րդ բանակային կորպուսի հրամանատար Սասուն Բադասյանի ազատումը բավականին խոր արմատներ ունի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նրա ազատման պատճառը բանակային կորպուսում ներքին տարաձայնություններն են եղել: Ընդհարում է եղել նաեւ 5-րդ բանակային կորպուսի շտաբի պետի հետ, եւ անգամ տարածված լուրեր կան, որ տարաձայնությունը հասել է միմյանց վիրավորանքներ հասցնելուն ու լույս աշխարհ գալն անիծող, հայհոյող խոսքերին: Ի դեպ, տեղեկացանք նաեւ, որ Բադասյանին ազատելուց առաջ՝ որոշել են նրան գործուղել արտերկիր՝ զինվորական պատրաստության դասերի, ըստ էության՝ իրավիճակը այդպես մեղմելու նպատակով: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 9-ին, Հայաստանի նախագահի հրամանագրով, Սասուն Բադասյանն ազատվել է 5-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից: Ըստ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, որը նշված է հրամանագրում, «պայմանագրային զինծառայողը զինվորական պաշտոնից ազատվում է՝ վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական հաստատություններ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու դեպքում»: Այլ մանրամասներ չեն հրապարակվում: Բադասյանը 5-րդ կորպուսի հրամանատար էր նշանակվել անցած տարվա փետրվարին:

Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության արդեն նախկին ղեկավար Գրիգոր Երիցյանը դատական հայց է ներկայացնելու՝ ընդդեմ Երեւանի ավագանու: Ինչպես արդեն հայտնել ենք, ավագանու՝ սեպտեմբերի 10-ի նիստի ժամանակ, ՔՊ խմբակցության նախաձեռնությամբ, Գրիգոր Երիցյանը զրկվել էր մանդատից: Ավագանու երկու անկախ անդամներ եւս զրկվել էին մանդատից՝ ՔՊ-ի սատելիտ «Հանրային ձայն» խմբակցության նախաձեռնությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը Գրիգոր Երիցյանից տեղեկացավ, որ նա պատրաստվում է դիմել վարչական դատարան՝ վիճարկելու իրեն մանդատից զրկելու ավագանու որոշումը. «Արդեն համապատասխան թղթերը ներկայացրել եմ մեր փաստաբանական խմբին, հաջորդ շաբաթ հայցն արդեն մուտք կարվի դատարան»: Ի դեպ, նույն հիմքով եւս երկու հայց կա ընդդեմ ավագանու ներկայացված. խոսքը ավագանու նախկին անդամներ Հայկ Մարությանի եւ Սոնա Աղեկյանի մասին է, որոնց դեռ ամիսներ առաջ՝ փետրվարին, ՔՊ-ն եւս զրկել էր մանդատից: Սա չլսված բան է. ժողովրդի կողմից ընտրված թեկնածուներին ՔՊ-ն զրկում է իրենց կարգավիճակից: Նույնիսկ նախկին քննադատված իշխանությունների օրոք չի եղել այսպիսի ակնհայտ ապօրինություն:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ «Ուիգմոր» նորաբաց բժշկական կենտրոնին ՀՀ կառավարությունը 1.5 մլն դոլար է փոխանցել՝ առանց ռիսկերի փաստացի գնահատման: Հենց սրանից հետո «Ուիգմոր» բժշկական կենտրոնը հայտնվեց նույնիսկ կառավարության ուշադրության կետրոնում: Այս փոխանցումից հետո իրավապահները մտան նշված բժշկական կենտրոն եւ սկսեցին փնտրել ապօրինություններ: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ փորձեց ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանից հետաքրքրվել՝ այդ ինչպես է պատահել, որ նորաբաց «Ուիգմոր» ԲԿ-ն ստացել է 600 մլն դրամի պետպատվեր, այն դեպքում, երբ բժշկական կենտրոնը, ըստ մամուլի, անմիջական կապ ունի Անահիտ Ավանեսյանի մայրիկի հետ: Նախարար Ավանեսյանը, սակայն, փորձեց ինչպես միշտ շրջանցել, եւ խուսափելով պատասխանից՝ հորդորեց հարցում ուղարկել. սակայն հարցում ուղարկելու կարիք չկա, քանի որ փաստաթղթերը, որպես ապացույց, հրապարակում ենք (փաստաթուղթը՝ ArmLur.am կայքի սույն նյութի մեջ): Նախարար Ավանեսյանը պարզապես խուսափեց պարզաբանել, թե 600 մլն դրամ ինչու է տվել նորաբաց, պրոֆեսիոնալ ոչ մի հատկանիշով աչքի չընկած կլինիկային: Կոռուպցիոն վարակն արդեն իշխանության շարքերում է եւ աստիճանաբար ախտահարում է Նիկոլ Փաշինյանի կառավարության բոլոր օղակներին:

ԶՐՈՒՅՑ

«ԱՌԱՔՆԱՀԵՐԹ ՊԵՏՔ Է ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵՆՔ»

ArmLur.am-ի հետ զրույցում «Ուժը Հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանը հայտարարել է՝ պարտված իշխանությունը պետք է հեռանա, բանի որ իր հետ բանակցելիս հաշվի չեն նստելու:

Տիգրան Արզաքանցյանը նաեւ պնդում է՝ ինքն այս պետությանն այնքան օգուտ է տվել, որ երկրորդ նման մեկին չի ճանաչում:

-Պարոն Արզաքանցյան, Հայաստանում թե՛ արտաքին եւ թե՛ հատկապես ներքաղաքական դաշտում վերջերս բուռն իրադարձություններ են տեղի ունենում. ընդդիմադիր շարժում է ձեւավորվել, որն ակցիաներ է իրականացնում իշխանության հեռացման պահանջով, իշխանությունը իր հերթին բանակցություններ է վարում Ադրբեջանի հետ Խաղաղության պայմանագրի վերաբերյալ, նշում են, թե պայմանագիրն արդեն պատրաստ է, բայց, մյուս կողմից էլ, Դուք, որ ամենաակտիվ քաղաքական գործիչներից էիք, վերջին շրջանում պասիվացել եք, ու Ձեզ տեսնում ենք միայն գրառումներ անելիս եւ կամ սոցցանցի Ձեր էջում արված տեսանյութերի ձեւաչափով: Ինչո՞վ է պայմանավորված, որ այլեւս ակտիվ գործունեություն չեք ծավալում:

-Ես վաղուց չէի այցելել արտերկիր, չէի շփվել սփյուռքի մեր հարազատ ներկայացուցիչների հետ, այդ պատճառով էլ Հայաստանում չէի եւ ակտիվ չէի: Արտերկրում բավականին հանդիպումներ եմ ունեցել սփյուռքի մեր հայրենակիցների հետ, նրանց հետ գործնական քննարկումներ տարել եւ ամրապնդել մեր գործնական կապերը: Տարբեր ոլորտի՝ թե՛ քաղաքական, թե՛ բիզնես հանդիպումներ եմ ունեցել այնտեղ ու վերադարձել: Մի քանի օրից կրկին պետք է շարունակեմ հանդիպում-քննարկումներ իրականացնել, իսկ ինչ վերաբերում է քաղաքական իրադարձություններին եւ իմ աշխատանքներին, ապա նշեմ, որ իմ թիմի հետ հետեւում ենք կատարվող զարգացումներին, ինչը քննադատելու է՝ քննադատում ենք, ինչն առողջ զարգացում է ապրում՝ ուրախ ենք, բայց հիմա, երբ տեսնում ենք Ադրբեջանի նախագահին ինչպիսի հայտարարություններ է հնչեցնում, մեղմ ասած՝ անհանգստանում ենք: Ադրբեջանի նախագահն այնպես է խոսում, ասես երկրորդ կամ երրորդ պատերազմն է եղել եւ նա հաղթել է:

Իր հռետորաբանությամբ իրեն հաղթական երկրի ներկայացուցիչ է համարում: Փորձում է ցույց տալ, որ կարողանում է ազդեցիկ դեր ունենալ մեր ինքնիշխան պետության վրա, կարծում է՝ կարող է այսօրվա ղեկավարությանը ստիպել, օրինակ, փոխել ՀՀ Սահմանադրությունը, եւ փոխել այն Ադրբեջանի ու Թուրքիայի ցանկությամբ:

-Պարոն Արզաքանցյան, քանի որ Դուք եւս նշեցիք Ադրբեջանի պահանջի մասին, տպավորություն է կարծես, որ հայկական իշխանություններն ամենեւին չեն ընդվզում Սահմանադրության փոփոխության պահանջի դեմ, ավելին՝ նոր խումբ է ձեւավորվել, որը զբաղվում է այդ սահմանադրության մշակմամբ, ի՞նչ եք կարծում, դրա պահանջը կա՞, արդյոք արժե՞ գնալ Սահմանադրության փոփոխության քայլին:

-Մինչեւ սահմանադրական աշխատանքներին անցնելը մենք շատ այլ խնդիրներ ունենք: Պետք է մեր թշնամուց պահանջենք կատարել այն կետերը, որը նա պարտավորված է կատարելու՝ ըստ պայմանագրի եւ ամենակարեւորը՝ պետք է վերադարձնենք մեր բոլոր գերիներին, Ադրբեջանից պիտի պահանջենք դուրս գալ Հայաստանի սահմաններից, եւ մինչեւ չկատարվի դեմարկացիա եւ դելիմիտացիա մենք չենք կարող ստորագրել խաղաղության որեւէ պայմանագիր:

Զրուցեց ԳՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՆԵՐՈՒՄ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԻՆ

Ընդդիմադիր հայացքներ ունեցող պաշտոնյաներին աշխատանքից ազատելը դարձել է սովորական երեւույթ, ինչին բախվում ենք արդեն մի քանի տարի:

Ներկայիս իշխանականները չեն կարողանում հանդուրժել մարդկանց, ովքեր չեն կիսում իրենց տեսակետը:

Նման դեպքերը շատ են ու բացահայտ: Խնդիրը, կարծես, սկիզբ է առել դեռ 2019 թվականից, երբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ Լարիսա Մադոյանն ազատվեց Կոտայքի փոխմարզպետի պաշտոնից: Նման օրինակ է նաեւ 2021 թվականին Կառավարման ակադեմիայի ղեկավարության կողմից հանրապետականներ Հայկ Մամիջանյանին, Արտակ Զաքարյանին եւ դաշնակցական Արթուր Խաչատրյանին դասավանդելու հնարավորությունից զրկելը:

Նաիրի Հոխիկյանը, ով դասավանդում էր ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում, 2022 թվականից հեռացվել է. պատճառը կրկին նրա ընդդիմադիր հայացքներն են:

2023 թվականին նույն ճակատագրին արժանացավ նաեւ Երեւանի Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի արդեն նախկին պրոռեկտոր Ցոլակ Ակոպյանը:

«ՀայաՔվե» քաղաքացիական նախաձեռնության անդամ, պատմաբան Մենուա Սողոմոնյանը 2024 թվականին է հեռացվել մայր բուհի՝ ԵՊՀ-ի դասախոսական պաշտոնից: Նույն բուհից հեռացվեց նաեւ Աբրահամ Գասպարյանը, ինչպես նաեւ Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի երկարամյա դասախոս Գեւորգ Պետրոսյանը:

Նույն 2024 թվականին Երեւանի քաղաքապետի՝ օգոստոսի 14-ի որոշմամբ Երեւանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Տիգրան Հեքեքյանը եւս ազատվեց պաշտոնից եւ պատճառը կրկին նույնն է:

Աժ նախկին նախագահ, անկուսակցական Տիգրան Թորոսյանը եւս արժանացավ վերոնշյալ անձանց ճակատագրին:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ՀԱՅԵՐԸ ՉՊԵՏՔ Է ՎՍՏԱՀԵՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ». ԼՈՒԿԱՇԵՆԿՈ

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն ասել է, որ «հանդես է գալիս Հայաստանի հետ լավ հարաբերություններ պահպանելու օգտին»: Այս մասին նա հայտարարել է Բելառուսում բնակվող տարբեր ազգությունների ներկայացուցիչների հետ հանդիպմանը, փոխանցում է ԲԵԼՏԱ-ն:

«Լավ կլիներ, որ, ինչպես նախկինում, լավ հարաբերություններ կառուցեինք Հայաստանի հետ՝ չնայած բոլոր թերություններին ու նրբերանգներին: Հավատացեք, սա բացարձակապես մեր մեղքը չէ,- ասել է նա, - մենք ամեն կերպ փորձել ենք օգնել հայերին, համագործակցել ենք՝ ինչպես ամենամոտ մարդկանց հետ, ամեն կերպ օգնել ենք. բայց, տեսեք, ցանկացան դեպի Արեւմուտք, ԵՄ»:

«Ի՞նչ Արեւմուտք: Մենք դեմ չենք համագործակցությանը Արեւմուտքի, ամերիկացիների հետ, բայց տեսեք նրանց քաղաքականությունը... Վաղն Ամերիկայում իշխանության կգա նոր ղեկավարություն, քաղաքականությունը բոլորովին այլ կլինի: Նրանց սովորությունն է՝ «ո՞վ եք դուք, մենք ձեզ չենք ճանաչում», դա իրենց քաղաքականությունն է: Եվ ես այս մասին անընդհատ ասել եմ ձեր ղեկավարությանը: Եթե ասում եմ՝ չեք հասկանում, ուրեմն ես արդեն հին մարդ եմ քաղաքականության մեջ: Ես շատ եմ տեսել: Չի կարելի նրանց վստահել:

Հայերը շատ խելացի մարդիկ են: Մոտ ապագայում նրանք կպարզեն, թե որտեղ է իրենց երջանկությունը»,- ասել է Լուկաշենկոն:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Կառավարությունը երեկվա՝ սեպտեմբերի 12-ի նիստում որոշեց «Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների» համար հատկացված գումարից նվազեցնել 7,4 մլն դրամ եւ հատկացնել «Պետական սեփականություն հանդիսացող կառույցների ու տարածքների պայմանների բարելավման ապահովում» միջոցառմանը:

Այս որոշմամբ՝ ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների եւ ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ իշխանությունները Քաղաքացու օրվա միջոցառումների համար 27 մլն դրամից ավելի գումար են հատկացրել:

ArmLur.am-ի գրավոր հարցմանն ի պատասխան՝ վարչապետի աշխատակազմից հայտնել են, որ երկու պայմանագիր է կնքվել այդ օրվա միջոցառումների կազմակերպման համար:

Առաջին պայմանագիրը վարչապետի աշխատակազմը կնքել է «Գլոբալ Սուփորթ ՍՊԸ»-ի հետ, իսկ մյուս պայմանագիրը՝ «ԲԻ ԹՈՒ ՋԻ ՍՊԸ»-ի հետ:

Ինչպես գնումների պաշտոնական տեղեկագրից ենք հասկանում՝ սույն պայմանագրերով կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է՝ մեկը տասնինը միլիոն հինգ հարյուր հազար (19.500.000) ՀՀ դրամ, մյուսը, ութ միլիոն յոթանասունյոթ հազար վեց հարյուր (8. 277. 600) ՀՀ դրամ:

ՍՐԲԱԶԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է Ռ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ

Սրբազան պայքարի՝ 2024թ. սեպտեմբերի 22-ին Երեւանի մարզահամերգային համալիրում կայանալիք մեծ հավաքին ընդառաջ, շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը հանդիպել է հայաստանյան եւ արցախյան քաղաքական դաշտի ուժերի, կուսակցությունների, ՀՀ երկրորդ եւ երրորդ նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի հետ, այս մասին տեղեկանում ենք «Սրբազան պայքար» տելեգրամ ալիքից:

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ հարգելի պատճառներով հանդիպում դեռեւս չի եղել, այդ մասին առաջին նախագահի գրասենյակի կողմից է ներկայացվել:

ԲԱՅԴԵՆՆ «ԱՋԱԿՑՈՒՄ» Է ԹՐԱՄՓԻՆ

ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփի կողմնակիցները զայրացել են այն բանից հետո, երբ համացանցում հայտնվեցին պետության ներկայիս ղեկավար Ջո Բայդենի լուսանկարները, որոնցում նա հագնված է նախկին հանրապետական նախագահի նախընտրական արշավի պարագաներով, գրում է The Independent-ը:

Լուսանկարներում երեւում է, որ ԱՄՆ նախագահը ժպտում է եւ վառ կարմիր գլխարկով է, որի վրա գրված է Trump 2024: Թրամփի քարոզարշավը շտապել է տարածել լուսանկարը՝ գրելով. «Շնորհակալություն աջակցության համար, Ջո՛»:

«Քնկոտ Ջո՛, բարի գալուստ Թրամփի թիմ» - գրել է մի օգտատեր: Մեկ այլ օգտատեր Բայդենի՝ գլխարկ կրելն անվանել է «ամենախելացի բանը, որ նա արել է իր ողջ քաղաքական կարիերայի ընթացքում»: Բայդենի արշավը շտապել է պարզաբանել լուսանկարի հետ կապված հանգամանքները՝ ասելով, որ դա «նախագահի ինքնաբուխ ժեստ էր՝ խթանելու երկկուսակցական միասնությունը»՝ չորեքշաբթի օրը Փենսիլվանիա կատարած այցի ժամանակ:

Սպիտակ տան մամուլի քարտուղարի ավագ տեղակալ Էնդրյու Բեյթսը հայտնել է, որ միջադեպը տեղի է ունեցել Բայդենի՝ Շենքսվիլի հրշեջ վարչություն կատարած այցի ժամանակ՝ սեպտեմբերի 11-ի տարելիցին նվիրված հիշատակի արարողությանը նրա հայտնվելուց հետո:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուսաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինը սեպտեմբերի 11-ին ընդունել է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով Թուրքիայի հատուկ ներկայացուցիչ Սերդար Քըլըչին, հայտնել են ՌԴ ԱԳՆ մամուլի ծառայությունից:

«Տեղի է ունեցել մտքերի հանգամանալից փոխանակում Հարավային Կովկասում կայուն խաղաղության եւ կայունության հասնելու ուղիների շուրջ:

Երկուստեք շահագրգռվածություն է արտահայտվել երկու երկրների մոտեցումների սերտ համակարգումը շարունակելու համար, ներառյալ՝ «3+3» խորհրդատվական տարածաշրջանային պլատֆորմի շրջանակում»,- նշված է հաղորդագրության մեջ:

ԱՐՋԱԳԱՆՔԵԼՈՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ «ՍՐՏԻ» ԴԱՏԱՎՈՐԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԳՈՐԾՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Հակակոռուպցիոն կոմիտեում հարուցված քրեական վարույթն իմ մասով ակնհայտ քաղաքական բաղադրիչներ ունի եւ խոսքի ազատության սահմանափակման դրսեւորում է:

Ինչպես բազմիցս նշել եմ իմ հրապարակումներում՝ ես մշտապես գրություններ եմ ուղարկում միջազգային կառույցներին տարբեր իրավախախտումների վերաբերյալ՝ ՀՀ ներքին եւ արտաքին խնդիրները ներառող:

Եվ բացառություն չէր նաեւ Արմեն Աշոտյանի նկատմամբ հարուցված մեղադրանքը, որի համար նրան կալանավորել են:

Իմ մասով հարուցված քրեական վարույթը նույնպես ակնհայտ քաղաքական ենթատեքստ ունի՝ խոչընդոտելու իմ պատգամավորական գործունեությանը:

Ես Ազգային ժողովի պատգամավոր եմ, առաջնորդվում եմ իմ խղճով եւ համոզմունքով, ինչպես պահանջում է Սահմանադրությունը, եւ կարող եմ ցանկացած հարցի շուրջ ազատ տեսակետ արտահայտել եւ կիսվել դրանցով իմ միջազգային գործընկերների հետ. ընդ որում իմ տեսակետները որեւէ կերպ անձնավորված չեն»:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում դատավոր Դոլմազյանի դիմումի հիման վրա քննվում է քրեական վարույթ, որի շրջանակներում որպես վկա ներգրավված է ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը: Այս մասին օրերս «5-րդ ալիք»-ի եթերում հայտարարել է Թ. Թովմասյանը:

Հիշեցնենք, որ քաղբանտարկյալ Արմեն Աշոտյանի գործը քննող դատավոր Վահե Դոլմազյանը դիմել է իրավապահներին՝ պահանջելով պատժել պատգամավոր Թովմասյանին, որ վերջինս հրապարակային հայտնել է, թե Արմեն Աշոտյանի կալանքը քաղաքական հրահանգի արդյունք է եւ դիմել է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կառույցներին՝ ուշադրություն հրավիրելով խախտվող իրավունքների վրա: Դատավոր Դոլմազյանը պատգամավորի գործունեությունը համարել է իբրեւ միջամտություն իր եւ արդարադատության գործունեությանը ու պահանջում է քրեական պատասխանատվության ենթարկել պատգամավորին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս տարվա ապրիլի 19-ին ՀՀ քննչական կոմիտեում հարուցվել է քրեական վարույթ, ապա այն տեղափոխվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե՝ քննությունը շարունակելու:

Թագուհի Թովմասյանը եթերում ասաց. «Ես այդ հրապարակումով հայտնել եմ իմ անձնական տեսակետը՝ հիմնված բացառապես ազատ խոսքի իրավունքի վրա, որը երաշխավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ միջազգային իրավական փաստաթղթերով: Արտահայտված մտքերը որեւէ կերպ չեն գերազանցում խոսքի ազատության սահմանները եւ օբյեկտիվ դիտորդի մոտ չեն կարող տպավորություն ստեղծել, որ ուղղված են դատական գործընթացի միջամտությանը»:

Պատգամավորն ասաց, որ որպես ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերով մշտական հանձնաժողովի լիազորություններից ապօրինաբար զրկված նախագահ, շարունակում է զբաղվել մարդու իրավունքների պաշտպանությամբ եւ որպես պատգամավոր առաջնորդվում է իր խղճով եւ համոզմունքով:

«Օրինակ՝ 2023 թվականի դեկտեմբերի 18-ին ես հանրայնացրել եմ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարի Պեյչինովիչ Բուրիչին հասցեագրված իմ հերթական նամակի պատասխանը՝ նույն Արմեն Աշոտյանի գործի վերաբերյալ: Սակայն այդ հրապարակումից առաջ եւ հետո դատավոր Վ. Դոլմազյանը որեւէ դիմում չի ներկայացրել իրավապահներին եւ չի պնդել, թե փորձել եմ ազդել իր կամ արդարադատության վրա» - մանրամասնեց պատգամավորը:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ քաղաքական հետապնդումների շարքը շարունակվում է, եւ իշխանության «սրտի» դատավոր Դոլմազյանի դիմումի հիման վրա՝ քաղաքական հետապնդում է հարուցվել ընդդիմադիր պատգամավորի նկատմամբ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲՐԻԿՍ-Ի ՄԱՍԻՆ

Տասնյակ պետություններ ցանկանում են մասնակցել ԲՐԻԿՍ-ի աշխատանքներին, ասել է Վլադիմիր Պուտինն անվտանգության հարցերով ասոցիացիայի երկրների բարձր ներկայացուցիչների հանդիպմանը, փոխանցում է РИА Новости-ն:

«Այսօր ավելի քան երեք տասնյակ երկրներ, ավելի ճիշտ՝ 34 պետություններ, արդեն ցանկություն են հայտնել այս կամ այն ձեւով միանալու մեր ասոցիացիայի գործունեությանը»,- ասել է ՌԴ նախագահը:

Նրա խոսքով՝ Ռուսաստանը, որպես գործող նախագահ, պատասխանատու մոտեցում է ցուցաբերել համատեղ աշխատանքի կազմակերպմանը: Այսպիսով, այն նպաստել է ԲՐԻԿՍ-ի բոլոր մեխանիզմներին նոր մասնակից երկրների ամենաարագ եւ ամենաօրգանական ինտեգրմանը:

«Ռուսաստանի նախագահությունը նախաձեռնել է փոխգործակցության նոր ոլորտներ: Դրանք ներառում են տրանսպորտի նախարարների, երկրաբանական հետազոտությունների ղեկավարների հանդիպումները եւ միջուկային բժշկության ԲՐԻԿՍ-ի ֆորումը: Մշակութային եւ հումանիտար ուղղու վրա մեծ հնչեղություն ունեցան BRICS քաղաքացիական եւ ակադեմիական ֆորումները, ընկերական սպորտային խաղերը, ինչպես նաեւ թեմատիկ փառատոներն ու ցուցահանդեսները Ռուսաստանի տարբեր քաղաքներում»,- հավելել է Պուտինը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԹՎՈՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Ճապոնիայի վարչապետ դառնալու համար պայքարում ռեկորդային թվով՝ ինը թեկնածուներ կան, այդ թվում՝ սերֆինգով զբաղվող նախկին վարչապետի որդին եւ բացահայտ ազգայնականը, որը հավակնում է դառնալ երկրի առաջին կին վարչապետը, հաղորդում է AFP-ն:

Ով էլ հաղթի սեպտեմբերի 27-ին Լիբերալ-դեմոկրատական կուսակցության (LDP) ղեկավարության ընտրություններում՝ կփոխարինի գործող վարչապետ Ֆումիո Կիսիդային, ում եռամյա ժամկետը ուղեկցվել է սկանդալներով եւ գների բարձրացման մտահոգություններով:

Հարցումները ցույց են տալիս, որ առաջատարներն են 43-ամյա Շինջիրո Կոիզումին, բնապահպանության նախկին նախարարը եւ նախկին վարչապետ Ջունիչիրո Կոիզումիի որդին եւ 67-ամյա վետերան եւ պաշտպանության նախկին նախարար Շիգերու Իշիբան:

«Ես ցանկանում եմ փոխել Ճապոնիայի քաղաքականությունը, որը հետ է մնացել փոփոխվող ժամանակներից», - ասել է Կոիզումին, երբ յուրաքանչյուր թեկնածու հանդես էր գալիս նախընտրական ելույթներով LDP-ի կենտրոնակայանում:

Նրա խոստումները ներառում են աշխատաշուկայի ապակարգավորումը, քաղաքական հիմնադրամների թափանցիկության բարձրացումը եւ «տարիներ շարունակ քննարկվող հարցերի լուծումը», ինչպես օրինակ՝ թույլ տալ ամուսնական զույգերին տարբեր ազգանուններ ունենալ:

Մինչդեռ Իշիբան, ընդգծելով տարածաշրջանում առկա լարվածությունը, հիշատակել է հինգշաբթի առավոտյան Հյուսիսային Կորեայի բալիստիկ հրթիռի փորձարկումը:

«Նրանք դա չեն անում որպես կատակ», - ասել է նա՝ պնդելով Արեւելյան Ասիայում ՆԱՏՕ-ի նման կազմակերպության անհրաժեշտության մասին:

ՇՈՒՐՋ 4.400.000 ՀՀ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԼԱՐԵՐ ԵՆ ԳՈՂԱՑՎԵԼ

ՀՀ քննչական կոմիտեից տեղեկացնում են, որ 2024 թվականի օգոստոսի 30-ից սեպտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում ՀԷՑ ՓԲԸ հյուսիսարեւելյան տեղամասի աշխատակցից հաղորդումներ են ստացվել այն մասին, որ Գավառ քաղաքի Ծաղկաշեն բնակավայրի հարակից դաշտամիջյան հատվածում գտնվող շուրջ 2000 մ, 3000 մ եւ 1500 մ էլեկտրական բարձր լարման հաղորդալարեր են գողացվել՝ պատճառելով ընդհանուր շուրջ 4.400.000 ՀՀ դրամի վնաս:

2024 թվականի սեպտեմբերի 4-ին հաղորդում է ստացվել նաեւ քաղաքացուց այն մասին, որ իր ծանոթը՝ Սյունիքի մարզի Տաթեւ համայնքի բնակիչը, նախօրեին առաջարկել է իրեն պատկանող «ԳԱԶ 53-12» մակնիշի բեռնատարով որոշակի վարձատրության դիմաց Գավառ համայնքից ալյումինե մալուխներ տեղափոխել Այնթապ բնակավայր:

Հաղորդումների հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել են քրեական վարույթներ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (2 դրվագ), 44-254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով:

Նախաքննության ընթացքում որոշում է կայացվել, օբյեկտիվ ու բազմակողմանի քննություն ապահովելու նպատակով, քրեական վարույթները միացնելու եւ նախաքննությունը համատեղ կատարելու վերաբերյալ:

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության քննիչների եւ ոստիկանության ծառայողների կողմից համատեղ ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել են դեպքերի էական մի շարք հանգամանքներ, այդ թվում, որ նշված գողությունները եւ գողության փորձը կատարվել են կազմակերպված խմբի կողմից:

Մասնավորապես քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ խմբի վեց անդամները, ովքեր Սյունիքի մարզի բնակիչներ են, նախնական համաձայնության գալով, ձեռնամուխ են եղել խոշոր չափերով հափշտակություն կատարելուն, իսկ գողացված մալուխները խմբի անդամներից մեկին պատկանող բեռնատար ավտոմեքենայով տեղափոխել են Այնթապ բնակավայրում գտնվող մետաղի ընդունման կետ:

Նախաքննության ընթացքում ընդհանուր թվով 7 անձ ձերբակալվել է, ովքեր կատարվածի վերաբերյալ տվել են մանրամասն խոստովանական ցուցմունքներ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա չորս անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով, երկու անձի նկատմամբ 44-254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով, իսկ մեկի նկատմամբ՝ 46-254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նշված անձանց ներկայացվել է մեղադրանք:

Դատարանի որոշմամբ՝ մեկ անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը, երկուսի նկատմամբ՝ վարչական հսկողությունը, իսկ չորսի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

ՀՀ քննչական կոմիտե

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ԴՊՐՈՑԻ ՄՈՏ

ԽԱՂ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՐՑԸ՝ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ սեպտեմբերի 11-ին Լուսառատ գյուղի Թումանյան փողոցի դպրոցի մոտ դանակահարություն է տեղի ունեցել:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ձախ թեւատակի կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխվել Մ.Մ-ն:

Պարզվել է, որ ժամը 22:15-ին, նշված գյուղի 6-րդ շենքի բակում, Ա.Ա-ի եւ Մ.Մ-ի միջեւ վիճաբանության ժամանակ վերջինս ձեռքով հարվածել է Ա.Ա-ին, որից հետո Ա.Ա.-ն դանակով հարվածել է Մ.Մ-ին:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ա.Ա.-ն խմած է եղել ու դանակի գտնվելու վերաբերյալ ոչինչ չի հայտնել. իսկ ահա վեճը միմյանց փոխանցված խաղային հավելված վաճառելու հետ է կապված եղել, ինչի ժամանակ էլ դանակահարել են քաղաքացուն:

Ավելի ուշ ՆԳՆ-ն հանդես եկավ հաղորդագրությամբ. «Սեպտեմբերի 11-ին՝ ժամը 22:23-ին, ՆԳՆ ոստիկանության Արարատի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել էր, որ Լուսառատ գյուղի դպրոցի մոտ դանակահարություն է կատարվել: Ոստիկանություն հաջորդ ահազանգը «Արտաշատ» բժշկական կենտրոնից էր. կտրած-ծակած վերքով բուժօգնության էր տեղափոխվել Լուսառատ գյուղի բնակիչ 25-ամյա մի երիտասարդ:

Ոստիկանության Արարատի բաժնի ծառայողներն ու մարզի պարեկները համատեղ ձեռնարկած միջոցառումներով պարզել են, որ ժամը 22:00-ի սահմաններում Լուսառատ գյուղի շենքերից մեկի բակում գումարային հարցի շուրջ վիճաբանության ժամանակ 25-ամյա երիտասարդին դանակահարել էր 33-ամյա համագյուղացին:

Հետագա միջոցառումներով լուսառատցի 33-ամյա երիտասարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է Արարատի բաժին: Նա եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Վեդիի քննչական բաժին:

Հանգամանքները պարզվում են»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը եւ ճգնաժամային կառավարման ակադեմիան կմիավորվեն: Համապատասխան նախագիծը երեկ հավանության արժանացավ ՀՀ կառավարության նիստի ժամանակ: ՀՀ ՆԳ փոխնախարար Արփինե Սարգսյանը նշեց, որ այժմ նախարարության կազմում գործում է երկու ուսումնական հաստատություն, մեկը պատրաստում է ոստիկանների, մյուսը՝ փրկարարների:

«Միասնական կրթական կենտրոնի ստեղծումը թույլ կտա նախարարությանը արդյունավետ իրականացնել իր քաղաքականությունը մեկ կենտրոնում: Նախագիծը նախեւառաջ ուղղված է կադրերի պատրաստման մակարդակի բարձրացմանը, ինչպես նաեւ գործընթացների կառավարման բարելավմանը», - ընդգծեց Սարգսյանը: Միասնական կենտրոնը, ըստ նրա, նաեւ կապահովի ճգնաժամային իրավիճակներում ոստիկանների եւ փրկարարների ավելի համակարգված փոխգործակցությունը:

Ուսումնական երկու կենտրոնների միավորումը նախատեսվում է ավարտել մինչեւ տարեվերջ: Միասնական համալիրը հետագայում կտեղակայվի ակադեմիական քաղաքում:

ՀՐԱԶԵՆ ԵՎ ՓԱՄՓՈՒՇՏ

Ոստիկանության Աշտարակի բաժնի քրեական հետախույզները անօրինական կերպով զենք-զինամթերք պահելու եւ կրելու վերաբերյալ օպերատիվ տեղեկությունն իրացրին սեպտեմբերի 11-ին: Աշտարակ քաղաքի բնակիչ 43-ամյա տղամարդը Քուչակ գյուղի վարչական տարածքում հայտնաբերվեց, ձերբակալվեց եւ տեղափոխվեց Աշտարակի բաժին:

Ոստիկանությունից հայտնում են, որ բաժնում նա հայտնել է, որ տանն ապօրինաբար պահում է ինքնաձիգի փամփուշտներ եւ «Կարաբին» տիպի ակոսափող հրազեն: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում զննություն է կատարվել Աշտարակ քաղաքի Վարդգես Պետրոսյան փողոցի նրա տանը: Հայտնաբերվել են առանց գործարանային համարի «Կարաբին» տիպի հրազեն եւ ինքնաձիգի 42 փամփուշտ: 43-ամյա տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Արագածոտնի մարզային քննչական վարչություն: Հանգամանքները պարզվում են:

Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԴԱՏԸ

ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի փաստաբաններ Ալեքսանդր Կոչուբաեւը եւ Էրիկ Ալեքսանյանը հանդես են եկել հայտարարությամբ:

«Նախորդիվ հայտարարել էինք, որ Վլադիմիր Գասպարյանը Հակակոռուպցիոն դատարանի որոշմամբ ազատվել էր պատժի կրումից, ինչը պաշտպանական կողմի համար չի եղել բավարարող լուծում եւ ներկայացվել էր հատուկ վերանայման վերաքննիչ բողոք: Վերջինս Հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատական կազմից Մեսրոպ Մակյանը ինքնաբացարկ է հայտնել, քանի որ իր ազգականը նախկինում եղել է Վ. Գասպարյանի պաշտպանական խմբի մեջ: Սպասում ենք վերաքննությանը...»

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 100 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՎ Է ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՆՈՐ ԴԵԿԱՆԸ

Անուշավան Մակարյանը մի հնգամյակ՝ 2019 թվականից, Երեւանի պետական համալսարանի Իջեւանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատարն է: Նախկինում, հիմա էլ, նրան հարց ուղղեցինք՝ ե՞րբ է մրցույթ անցկացվելու տնօրենի թափուր պաշտոնի համար: Նրանից նույն պատասխանն ենք ստացել՝ «մրցույթ անցկացնելը ես չեմ որոշում, դա ԵՊՀ ռեկտորի իրավասությունն է»:

ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղում ասում են, որ Անուշավան Մակարյանին այնքան ժամանակ են տնօրենի պաշտոնակատար պահելու, մինչեւ իշխանության սրտի թեկնածուն գիտական թեզ պաշտպանի ու Մակարյանին նրանով փոխարինեն: ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղում ասացին, որ մասնաճյուղում անառողջ կրքեր են: Այնտեղ դասախոսների զրույցների վերջին թեման հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Կարինե Պողոսյանին դեկանի պաշտոնից ազատելը եւ նրա փոխարեն Նաթելա Գրիգորյանին այդ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար նշանակելն է: Կ. Պողոսյանին դասախոսական աշխատանքի կես դրույք են տվել: Համալսարանի Իջեւանի մասնաճյուղում ասում են, որ Նաթելա Գրիգորյանը հովանավորվում է Անուշավան Մակարյանի կողմից, այդ պատճառով է անցյալ տարի նշանակվել հումանիտար գիտությունների ֆակուլտետի փոխդեկանի պաշտոնակատար: Զանգահարեցինք ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանին. նա հաստատեց, որ սեպտեմբերի 2-ին Նաթելա Գրիգորյանին նշանակել է հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար: Մակարյանն ասաց, որ նա պատմաբան է, գիտությունների թեկնածու, դոցենտ, նախկինում ղեկավարել է մասնաճյուղի կրթական բարեփոխումների եւ ուսուցիչների վերապատրաստման բաժինը: Կ. Պողոսյանի մասին ասաց, որ դեկանի պաշտնում ունեցել է որոշակի բացթողումներ, կազմակերպչական անհարթություններ, ինքն է դիմում գրել դեկանի պաշտոնից ազատվելու համար, նաեւ իրեն ասել է, որ հոգնել է դասախոսական աշխատանքից: Մակարյանը հայտնեց նաեւ, որ ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետի դեկանն է դիմում գրել պաշտոնից ազատվելու համար: Հարցրինք՝ Ն. Գրիգորյանը հովանավորվո՞ւմ է իր կողմից: Մակարյանն ասաց, որ բոլոր արժանի կադրերը իր կողմից լավ վերաբերմունքի են արժանանում, պաշտոնների նշանակվում, դա իր աշխատանքն է: Իջեւանի մասնաճյուղում տիրող անառողջ մթնոլորտի մասին մեր հարցին ի պատասխան՝ Ա. Մակարյանը հարցրեց, թե որտեղից է այդ տեղեկությունը. իմանալով, որ տեղեկությունը համալսարանի Իջեւանի մասնաճյուղից է հենց, տնօրենի պաշտոնակատարն ասաց, որ մթնոլորտը շատ անորոշ բան է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՑԿԱՑՎԵԼ

Երեկ ներկայացվել է, որ սեպտեմբերի 11-ին ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության կողմից Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցում կազմակերպվել եւ անցկացվել է «Հրդեհաշիջման, որոնողափրկարարական եւ վթարավերականգնողական աշխատանքների իրականացում դպրոցի մասնակի փլուզված մասնաշենքում» թեմայով ցուցադրական հատուկ-տակտիկական ուսումնավարժություն:

Ուսումնավարժությունը ղեկավարում էր մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հակոբ Սարգսյանը, շտաբի պետն էր ՄՓՎ պետի տեղակալ, փ/ծ գնդապետ Հարություն Մարգարյանը:

Միջոցառմանը տեղում հետեւում էին Վայոց ձորի փոխմարզպետ Ա. Խաչատրյանը, ՆԳՆ ոստիկանության եւ ԱԱԾ Վայոց ձորի մարզային վարչությունների պետերը, պաշտոնատար այլ անձինք:

Ուսումնավարժությանը ներգրավված էին Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ծառայողները, թիվ 59 հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Վայոց ձոր» ԳԳՄ Եղեգնաձորի տարածքային տեղամասի եւ ՀԷՑ ՓԲԸ Եղեգնաձորի տեղամասի վթարավերականգնողական խմբերը, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի պարեկապահակային խումբը, Եղեգնաձորի բժշկական կենտրոնի շտապ օգնության ծառայության բրիգադը, Հայկական Կարմիր խաչի ընկերության Վայոց ձորի մարզի մասնաճյուղի արագ արձագանքման թիմը:

Ուսումնավարժության նպատակն էր՝

• ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը՝ հրդեհաշիջման, փրկարարական եւ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ուղղությամբ,

• կատարելագործել արձագանքող ուժերի գործնական ունակությունները՝ ստեղծված իրավիճակում իրենց առջեւ դրված խնդիրների կատարման ուղղությամբ:

Ուսումնավարժության ընթացքում իրականացվեցին հետախուզության եւ իրավիճակի գնահատման, հրդեհաշիջման, տուժածներին առաջին օգնության ցուցաբերման եւ տեղափոխման, ինչպես նաեւ վթարավերականգնողական աշխատանքներ:

Այնուհետեւ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունում կատարված աշխատանքների վերլուծություն եւ ամփոփում, որի ընթացքում վեր հանվեցին ի հայտ եկած թերությունները, տրվեցին մի շարք մասնագիտական խորհուրդներ եւ նախանշվեցին առաջիկա անելիքները:

Ավարտին ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Հակոբ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց ուսումնավարժանքի մասնակիցներին՝ դրական գնահատելով արդյունավետ համագործակցությունն ու համատեղ կատարված աշխատանքները:

Ա. Ս.

ՇԻՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵԼ Է

Առաջնային շուկայում անշարժ գույքի ակտիվությունը նվազել է: Այս մասին սեպտեմբերի 12-ին լրագրողների հետ հանդիպմանն ասաց Հայաստանի անշարժ գույքի գործակալությունների ասոցիացիայի խորհրդի նախագահ Արթուր Մնացականյանը:

Նրա խոսքով, դա պայմանավորված է հիփոթեքային տոկոսների վճարման եկամտահարկի վերադարձի ծրագրի սպասվող լուծարմամբ: «Կառուցապատողները, որոնք սկսել են ծրագրեր իրականացնել, ասենք, երեք տարի առաջ, չէին սպասում, որ մինչեւ 2024 թվականը նման որոշում կկայացվի, ուստի նրանք կձգտեն լրացնել այդ ֆինանսական բացը»,- նշեց նա: Փորձագետը ենթադրեց, որ դա կդրսեւորվի, ի թիվս այլ բաների, զեղչերի տեսքով, այսինքն՝ շուկայում առաջարկները կլինեն շատ գրավիչ: «2025 թվականից հետո նորակառույցների շուկայում դեֆիցիտ կլինի, եւ ոլորտում կառուցապատողների թիվը կնվազի»,- պարզաբանեց նա: Այս առնչությամբ Մնացականյանը նորակառույց շենքում բնակարան գնել ցանկացողներին խորհուրդ տվեց դա անել առաջիկայում:

ՀԿ նախագահը հիշեցրեց նաեւ, որ 2025 թվականի վերջից խոշոր տուգանքներ են սպասվում այն կառուցապատողներին, ովքեր չեն կարող ժամանակին իրականացնել նախագծերը:

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ՝ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կառավարությունն ընդունել է որոշում, որով նախատեսվում է ընդունել Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ալիխանյան եղբայրների փողոց 3/3 հասցեում գտնվող հողամասի նվիրատվությունը եւ այն ամրացնել մարզպետի աշխատակազմին՝ քաղաքում բժշկական կենտրոն կառուցելու նպատակով:

Գործադիրն ընդունել է նաեւ «Գույք նվիրաբերելու մասին» որոշում, որով նախատեսվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Լանջազատ եւ Կանաչուտ բնակավայրերում գտնվող պետական սեփականություն հանդիսացող դպրոցապատկան հողամասերից նվիրաբերել համայնքին՝ մանկապարտեզներ կառուցելու նպատակով: Սուբվենցիոն ծրագրերով նախատեսվում է Արտաշատ համայնքի Լանջազատ եւ Կանաչուտ բնակավայրերում երկու տարվա ընթացքում կառուցել երկու խմբանի մանկապարտեզներ, որի համար համայնքի կողմից երկու տարիների ընթացքում կիրականացվի 710 մլն դրամի ներդրում:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 19 պատահար, 2 մարդ զոհվել, 26-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆՈՐ ՑԱՆՑԵՐ

Երեւանի քաղաքապետի տեղակալ Կամո Արեյանը սեպտեմբերի 12-ին շրջայցով հետեւեց քաղաքապետարանի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի եւ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի պատվիրմամբ իրականացվող ջրագծերի փոխարինման աշխատանքների ընթացքին:

«Այս տարի ամենամեծ ծրագիրն է իրականացվում մայրաքաղաքում ջրամատակարարման եւ կոյուղաջրերի հեռացման առումով: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, Տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ, իրականացվում են ջրամատակարարման ցանցի ամբողջովին նորացման, տնային միացումների, ջրաչափական հանգույցների տեղադրման աշխատանքներ Նոր խարբերդ, Հաղթանակ եւ Սիլիկյան թաղամասերում: Ընդհանուր առմամբ 133 կիլոմետրից 33-ը բաժին է ընկնում հիմնականում տնային միացումներին, մնացածը՝ բաշխիչ ցանցի արդիականացմանը: Նոր ցանցի կառուցման արդյունքում կլինի նորմալ ջրամատակարարում, կանոնավոր ջրաչափում եւ ամենակարեւորը՝ վերացվում են ջրային կորուստները: Հսկայական կորուստներ ունենք այս թաղամասերում: Միեւնույն ժամանակ՝ կորուստների պատճառով անբավարար է ջրամատակարարումը»,-մանրամասնեց փոխքաղաքապետը:

Արեյանի հավաստմամբ՝ հաջորդ ծրագրով կդիտարկվի նաեւ կոյուղու ցանցի անցկացումը:

Բացի այդ, ըստ փոխքաղաքապետի, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն Նորք Մարաշում, Սարի թաղում եւ Արաբկիրում իրականացնում է 60 կմ վերակառուցում, որից մոտ 3,7 կիլոմետրը կոյուղատարի, իսկ 56 կմ-ը՝նոր ջրամատակարարման ցանցի:

Կոյուղու եւ ջրագծերի փոխարինումը ընդգրկում է մոտ 2100 բաժանորդի: Արդյունքում կբացառվեն ջրի կորուստները, կապահովվի բնականոն ջրամատակարարումը եւ կիրականացվեն տնային միացումներ՝ ջրաչափական հանգույցների տեղադրմամբ: «Ընդհանուր առմամբ ամբողջ մայրաքաղաքում ՏԿԵՆ-ի, քաղաքապետարանի եւ «Վեոլիա ջուր» ընկերության կողմից իրականացվող ծրագրի ամենամեծ ծավալն է ընտրել քաղաքապետարանը՝ 1.7 միլիարդ դրամի չափով: Ընդհանուր առմամբ 235 կիլոմետրից 222-ը բաժին է ընկնում ջրամատակարարման ցանցին, մնացածը՝ կոյուղատար»,-հայտնեց Արեյանը:

Նա հսկայածավալ գնահատեց մայրաքաղաքում ջրամատակարարման խնդրի լուծման հարցում ցուցաբերված պետական աջակցությունը՝ ի դեմս ՏԿԵՆ-ի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արարատ Ալեքսանի Հունանյանս, կորցրել եմ ինձ պատկանող՝ AB 031 414 համարի դիպլոմս՝ տրված 2006 թվականին Երեւանի պետական համալսարանի կողմից:

ՊԵԿ-Ը ՀԱՅՏՆԵԼ Է ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱԴԱՄԱՆԴԱՆՄԱՆ ՔԱՐԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Հայաստանի պետական եկամուտների կոմիտեն հայտարարել է մաքսանենգ ճանապարհով ադամանդանման քարերի ներմուծումը կանխելու մասին:

««Զվարթնոց» օդանավակայանի ուղեւորների ժամանման սրահի մաքսային հսկողության գոտում ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելիս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի մաքսային ծառայողները, էլեկտրոնային առեւտրի եւ օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության ուղեւորների մաքսային սպասարկման եւ հսկողության բաժնի մաքսային ծառայողների հետ համատեղ բացահայտել են ադամանդանման քարերի մաքսանենգության նոր դեպք:

Մաքսային հսկողության է ենթարկվել Շարժա-Երեւան չվերթով ժամանած ՀՀ քաղաքացի Դ.Բ.-ն եւ վերջինիս ուղեբեռը: Նրա նկատմամբ իրականացված մաքսային զննման արդյունքում՝ անձնագրի պատյանի միջից հայտնաբերվել է 1 ադամանդանման թափանցիկ քար եւ «GIA» հավաստագիր: Նույն պայուսակում առկա «ARARAT» լատինատառ գրառմամբ ծխախոտի տուփից հայտնաբերվել է նաեւ տարբեր տրամաչափերով ադամանդանման 17 թափանցիկ քար: Տվյալ քաղաքացու ճամպրուկից հայտնաբերվել է տարբեր գրառումներով ադամանդների 94 հավաստագիր: Ճամպրուկից հայտնաբերվել է նաեւ 3 պոլիէթիլենային տոպրակ՝ լցված ադամանդանման թափանցիկ մանր քարերով, որոնց ընդհանուր քաշը կազմում է 69 գրամ:

Իսկ քաղաքացու հագած տաբատի՝ գործարանային կարվածքի տեսք ունեցող գոտկամասի մեջ էլ հայտնաբերվել են գաղտնարանների օգտագործմամբ, ապրանքների հայտնաբերումը դժվարացնող եղանակներով մաքսային հսկողությունից թաքցված, ինքնակպչուն ժապավենով իրար միացված տարբեր տրամաչափերով ադամանդանման 91 թափանցիկ քար:

ՀՀ քաղաքացու նկատմամբ իրականացված անձի մաքսային զննման արդյունքում եւ ճամպրուկից, ընդհանուր առմամբ, հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված, 109 տարբեր տրամաչափերով ադամանդանման թափանցիկ քար, ինչպես նաեւ 69 գրամ ընդհանուր քաշով թվով 3 պոլիէթիլենային տոպրակում լցված ադամանդանման թափանցիկ մանր քարեր:

«Ռազմավարական տեսակետից կարեւոր հումքային ապրանքների եւ մշակութային արժեքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ մշակված բնական ադամանդներն ընդգրկված են նույն որոշմամբ սահմանված ցանկում, եւ մաքսային մարմնի տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ հայտնաբերված ադամանդանման թափանցիկ քարերի մաքսային արժեքը գերազանցում է ՀՀ քրեական օրենսգրքի 292-րդ հոդվածով սահմանված ռազմավարական տեսակետից կարեւոր հումքային ապրանքների խոշոր չափը՝ 8 միլիոն ՀՀ դրամը:

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցները, ռազմավարական տեսակետից կարեւոր հումքային ապրանքների մաքսանենգություն կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, «Զվարթնոց» օդանավակայանի ուղեւորների ժամանման սրահի մաքսային հսկողության գոտում ձերբակալել եւ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն են տեղափոխել քաղաքացի Դ.Բ.-ին: Փաստի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 292-րդ հոդվածի հատկանիշներով, կազմվել է մաքսանենգության դեպքի վերաբերյալ արձանագրություն»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

ԿԱՄԵՑՎԵԼ Է ՊԱՆՐԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի մարզային կենտրոնի տեսուչների՝ Վահրամ Հովհաննիսյան ԱՁ-ին պատկանող կաթնամթերքի վերամշակման արտադրամասում (Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ) իրականացրած ստուգման ընթացքում հայտնաբերվել են սանիտարահիգիենիկ բնույթի խախտումներ:

Այսպես՝

. արտադրական շինությունների նախագծումը, դրանց կառուցվածքը, դասավորվածությունը եւ չափսը չեն ապահովել պարենային հումքի եւ սննդամթերքի, աղտոտված եւ մաքուր գույքի հանդիպակաց կամ խաչաձեւվող հոսքերը.

. չի իրականացվել տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ տեխնիկական սպասարկում եւ ընթացիկ վերանորոգում.

. չեն իրականացվել արտադրական շինությունների մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման եւ կրծողների ոչնչացման գործընթացները.

. արտադրամասը չի ունեցել սանհանգույց, լվացարաններ՝տաք եւ սառը ջրով.

. հատակների, պատերի, առաստաղների, դռների մակերեւույթները պատված չեն եղել անջրանցիկ, լվացվող, ախտահանվող նյութերից

. չի եղել հանդերձարան անձնակազմի համար:

Պանրի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է հայտնաբերված խախտումները վերացնելու ժամկետ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁ Է ԱՐՎՈՒՄ՝ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ ԹԵԹԵՎԱՑՆԵԼՈՒ

Ազգային ժողովի նիստում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը՝ նշելով, որ կատարվող փոփոխությունն առավելապես տեխնիկական բնույթի է:

Նախարարը պարզաբանել է, որ նախագծով կարգավորվելու է այն քաղաքացիների անընդհատ ուսումնառությունը, որոնք սովորում են դպրոցներում կամ հիմնական կրթության հիմքով կրթությունը շարունակում են արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում:

«Այս կարգավորման պարագայում մենք հնարավորություն կունենանք այդ քաղաքացիներին տարկետում տալ մեկ անգամ՝ մինչեւ իրենց ուսումնառության ավարտի օրը ներառյալ, իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողին՝ ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան քաղաքացու 20 տարին լրանալու օրը»,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ հավելելով, որ կատարվող փոփոխությունը հեշտացնելու է բազմաթիվ քաղաքացիների կյանքը՝ էապես կրճատելով նաեւ պետական մարմինների վարչարարությունը:

Ըստ հիմնավորման՝ներկայացված կարգավորման արդյունքում ամբողջովին կկրճատվի փաստաթղթաշրջանառության բարդ եւ ծավալուն ընթացակարգը, կբացառվեն տեխնիկական եւ այլ վրիպակները, կբարձրանա տարկետման տրամադրման գործընթացի կազմակերպման արդյունավետությունը:

Պատգամավորներից մեկի հարցին ի պատասխան՝ ԿԳՄՍ նախարարը հայտնել է, որ կան քաղաքացիներ, որոնց 18 տարին լրացել է, սակայն նրանք դեռեւս սովորում են դպրոցում կամ քոլեջում: Տարեկան մոտ 1000 նման դեպք է լինում, երբ տարկետման տրամադրման կամ երկարաձգման անհրաժեշտություն է առաջանում: Նախարարը նաեւ պարզաբանել է՝ կարգավորումը չի վերաբերելու այն քաղաքացիներին, որոնք 9-րդ դասարանն ավարտելուց հետո անմիջապես չեն շարունակում կրթությունը:

ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը նախագծի վերաբերյալ ներկայացրել է հանձնաժողովի փոխնախագահ Թագուհի Ղազարյանը:

Է, ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը հայտարարում է 2023 թվականի ստեղծագործությունների մրցույթ գրականություն, հայագիտություն, կերպարվեստ (գունանկար, քանդակ, գրաֆիկա), դեկորատիվ-կիրառական արվեստ, Վահան Թեքեյանին նվիրված աշխատության համար անվանակարգերում. այս մասին հաղորդագրություն է տարածել Թեքեյան մշակութային միությունը:

Յուրաքանչյուր անվանակարգում հաղթողը կստանա դրամական պարգեւ՝ 1500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Մրցույթին կարող են մասնակցել արվեստագետներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Հայաստանի սահմաններից դուրս:

Մրցույթին մասնակցել ցանկացողները www.armtmm.com կայքում պետք է սեպտեմբերի 10-ից մինչեւ հոկտեմբերի 10-ը (ներառյալ) լրացնեն մասնակցության հայտ՝ ներկայացնելով 2023 թվականին իրենց հեղինակած աշխատանքների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն կամ դիմեն ՀԹՄՄ գրասենյակ: Սխալ կամ թերի լրացված հայտերը չեն դիտարկվի:

«Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Հայաստանի Թեքեյան մշակութային միության գրասենյակ, ամեն օր՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից՝ ժամը 11:00-16:00-ն (հասցե՝ Երեւան, Խանջյան 50, 2-րդ հարկ, հեռ.՝ 010-55 26 32, 010-57 02 83)»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԻԱԽԱՌՆՈՒՄ

Երեւանյան հանդիսատեսը Վիվալդիի գլուխգործոց «Տարվա եղանակներ» ստեղծագործությունը վայելել է օրիգինալ լարային կազմով, նորարարական լուծումներով ու DJ ռեմիքսով:

Vivaldi DJ խորագրով համերգը բացառիկ է, քանի որ հեղինակներն օգտվել են Վիվալդիի «Տարվա եղանակների» օրիգինալ պարտիտուրայից եւ տոնայնության հետ կապված առհասարակ ոչ մի փոփոխություն չի կատարվել:

Երաժշտական հետաքրքիր համադրությունը՝ լուսային եւ գունային էֆեկտների կիրառմամբ, հանդիսատեսին պարգեւեց վառ ու հիշարժան զգացողություններ: Այս համադրությունը մեկ դահլիճում էր համախմբել տարբեր սերունդների եւ նախասիրությունների մարդկանց:

«Նյու Ջեներեյշն» նվագախմբի գեղարվեստական ղեկավար Նարեկ Գասպարյանը նշել է՝ նախագծի նպատակը դասական ու սիրված ստեղծագործության միախառնումն է գերժամանակակից տեխնոլոգիաների հետ: Նա ընդգծել է՝ այս նոր մոտեցումը կսիրվի ինչպես արդեն փորձառու մասնագետների, այնպես էլ դասական արվեստին ոչ այդքան մոտ հանդիսատեսի կողմից: «Նյու Ջեներեյշն Փրոջեքթ»-ի գործադիր տնօրեն Շմավոն Գրիգորյանը նշել է, որ այս մտահղացումը իրենց թիմի մոտ առաջացել էր դեռ նախորդ տարվանից: «Մենք միշտ փորձում ենք կյանքի կոչել տարբերվող եւ ինքնատիպ նախագծեր: Ու այս նախագիծը եւս տեսակով բացառիկ է, քանի որ թե՛ Հայաստանում, թե՛ ամբողջ աշխարհում սա լինելու է առաջին անգամ: Մեզ հաջողվել է համախմբել տաղանդավոր ստեղծագործողների եւ արդյունքը միանշանակ գոհացնելու է մեր հանդիսատեսին: Եվ սա եւս մեկ առիթ է երիտասարդներին ավելի մոտեցնելու դասական արվեստին. նաեւ կուզենամ նշել, որ արդեն իսկ տարվում են բանակցություններ Vivaldi DJ նախագիծը մի շարք երկրներում ներկայացնելու վերաբերյալ»,- ասել է Գրիգորյանը: Beatbox հայկական ասոցիացիայի ղեկավար Բագրատ Տերտերյանն (DJ BeatMan) էլ ընդգծել է՝ Vivaldi DJ նախագիծը աննախադեպ է, այն երաժշտական աշխարհի տարբեր բեւեռների համադրություն է: Երաժիշտը նշել է, որ իր համար իսկապես մեծ պատասխանատվություն է եղել Անտոնիո Վիվալդիի նման հանճարեղ կոմպոզիտորի երաժշտությունը մշակել ժամանակակից երաժշտական տենդենցներին համապատասխան՝ իհարկե, պահպանելով մեղեդին սկզբնական տեսքով: Ըստ նրա՝ ամբողջ թիմին հաջողվել է կատարել պատշաճ աշխատանք եւ դասական արվեստի, եւ նորարարական լուծումների կիրառման տեսանկյունից: Նախագիծն ունի շարունակական բնույթ, առաջիկայում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում նախատեսվում են VIVALDI DJ, Aram Khachaturian DJ, Arno Babajayan DJ, Mozart DJ եւ այլ նախագծեր:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՏԱՓՕՂԱԿՈՎ ՀՈԿԵՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն ընդունել է Տափօղակով հոկեյի միջազգային ֆեդերացիայի (IIHF) գլխավոր քարտուղարի տեղակալ, մրցաշարերի անցկացման բաժնի ղեկավար Հանես Էդերերին՝ քննարկելու Հայաստանում 2025 թվականին տափօղակով հոկեյի աշխարհի առաջնության IV դիվիզիոնի անցկացման հնարավորությունները: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ Հայաստանի տափօղակով հոկեյի ազգային ֆեդերացիայի նախագահ Վահրամ Սարգսյանը:

Հանես Էդերերը Հայաստան է ժամանել մարզական ենթակառուցվածքների, հյուրանոցային պայմանների գնահատման եւ կազմակերպչական հարցերի քննարկման նպատակով:

Հայաստանի հավաքականը 2025 թվականին կմասնակցի Տափօղակով հոկեյի աշխարհի առաջնության IV դիվիզիոնին, որը կանցկացվի 2025 թվականի ապրիլի 12-20-ը: Առաջնության շրջանակում կանցկացվի 15 հանդիպում, որոնց կմասնակցեն Հայաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության, Քուվեյթի, Մալայզիայի, Ինդոնեզիայի եւ Ուզբեկստանի հավաքականները: Հայաստանի հավաքականը վերջին անգամ մասնակցել է 2010 թվականին անցկացված մրցաշարին III-րդ դիվիզիոնում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը ողջունել է միջազգային ֆեդերացիայի ներկայացուցչին ու ներկայացրել վերջին տարիներին Հայաստանում մարզաձեւի զարգացման միտումները, անդրադարձել ՀՀ կառավարության՝ միջազգային խոշոր մրցաշարեր հյուրընկալելու քաղաքականությանը: Հանես Էդերերը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ողջունել ՀՀ թիմի վերադարձն աշխարհի առաջնություն՝ նշելով, որ գնահատելի է նաեւ Հայաստանի՝ մրցաշարը հյուրընկալելու ցանկությունը:

Տափօղակով հոկեյի ազգային ֆեդերացիայի նախագահ Վահրամ Սարգսյանն ընդգծել է՝ տեւական դադարից հետո արդեն երրորդ տարին է՝ անցկացվում է Հայաստանի տափօղակով հոկեյի առաջնությունը, ինչը կարեւոր պահանջ է միջազգային ֆեդերացիայի կողմից: Հայաստանի հավաքականը տեւական ընդմիջումից հետո ելույթները վերսկսել է այս տարվա փետրվարին անցկացված «Երեւանյան գիշերներ» միջազգային մրցաշարում: Երեւանի «Գազպրոմ-Արմենիա» մարզահամալիրում 4 թիմերի մասնակցությամբ կայացած մրցաշարում Հայաստանի հավաքականը վստահ հաղթանակներ է տարել ռուսական «Օլիմպ», «Արեւային արջեր» եւ «Ռոսպրեսա» թիմերի նկատմամբ եւ ճանաչվել մրցաշարի հաղթող:

«Մեծ ջանքեր գործադրեցինք, ինչի արդյունքում Հայաստանը աշխարհի առաջնությանը մասնակցելու իրավունք ստացավ»,- ասել է Վահրամ Սարգսյանը:

Տափօղակով հոկեյի միջազգային ֆեդերացիայի ներկայացուցիչն այցելել է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր, Երեւանի գեղասահքի եւ հոկեյի մարզադպրոց, «Գազպրոմ Արմենիայի» ուսումնասպորտային համալիր՝ ծանոթանալու ենթակառուցվածքային պայմաններին:

● Սեպտեմբերի 15-ին՝ 19:30-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի «Ինչ տարբերություն թե ում հետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞րն է համարվում ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք: Ուզում եմ իմանալ՝ կա արդյոք այդ գույքը անձի սեփականությունը լինելու որոշակի ժամանակահատվածի պահանջ:

Մկրտիչ Կիրակոսյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մ. Կիրակոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով՝ ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք՝ ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, անձնական օգտագործման մեկ ավտոմեքենան եւ տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում եւ ֆիզիկական անձի կողմից ձեռք են բերվել նախքան ՀՀ ժամանելը: Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան ՀՀ ներմուծվելը՝ վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ, առնվազն 6 ամիս հաշվառված լինի ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ ՀՀ մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան ՀՀ-ում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 250-րդ հոդվածի դրույթներով՝ սահմանված ժամկետը խախտելու դեպքում Միության անդամ երկրների ռեզիդենտ ֆիզիկական անձինք կրում են այնպիսի պարտավորություններ, որոնք սահմանված են Միության եւ ՀՀ օրենսդրությամբ ավտոմեքենան ՀՀ ներքին սպառման նպատակով ներմուծելու համար:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Կնքել եմ վարկային պայմանագիր, որից բխող պարտավորությունների ապահովման համար գրավադրել եմ իմ գույքը: Վճարումները չկատարելու կամ ժամանակին չկատարելու դեպքում ի՞նչ հետեւանքներ կարող են լինել:

Իրինա Մելքոնյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Վարկի մարման եւ տոկոսների վճարման պարտականությունը չկատարելու կամ ժամանակին չկատարելու դեպքում վարկը դասակարգվում է՝ դառնալով ժամկետանց, որի դիմաց հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տույժեր: Պայմանագրում տույժերի վերաբերյալ դրույթներ նախատեսված չլինելու դեպքում տոկոսները հաշվարկվում են կետանցի (ուշացման) օրվանից մինչեւ պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Եթե իրացման արդյունքում ավելացել է գումար, ապա ֆինանսական կազմակերպությունը պետք է վերադարձնի Ձեզ այդ գումարը, իսկ եթե ստացված գումարը բավարար չէ վարկային պարտավորություններն ամբողջությամբ մարելու համար, ապա Դուք պատասխանատու եք վարկային պայմանագրից բխող պարտավորությունների համար Ձեզ պատկանող մնացած գույքով: Միայն գրավատուն հանձնված գույքի գրավի դեպքում է, որ գույքի իրացումից հետո գրավատունն իրավունք չունի որեւէ պահանջ ներկայացնել պարտապանի նկատմամբ, եթե անգամ գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն անբավարար է պահանջը լրիվ բավարարելու համար (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 255 հոդվածի 7-րդ կետ):

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե վարկային պայմանագրի շրջանակներում առկա է գրավադրված գույք, ապա ֆինանսական կազմակերպությունը կարող է իրացնել գրավի առարկան եւ իրացման արդյունքում ստացված գումարը ուղղել վարկային պարտավորությունների կատարմանը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

SpaceX ընկերության Polaris Dawn առաքելության մասնակից երկու ոչ պրոֆեսիոնալ տիեզերագնացները երեկ առաջին անգամ դուրս են եկել բաց տիեզերք: 41-ամյա միլիարդատեր Ջարեդ Այզեքմենը եւ SpaceX-ի ինժեներ 30-ամյա Սառա Ջիլիսը դարձել են առաջին պետական ծառայող չհանդիսացող անձինք, որոնք դուրս են եկել բաց տիեզերք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 11 +24 + 29
Կոտայքի լեռներ	+8 + 11 +25 + 29
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +29 + 30
Գեղարքունիք	+9 + 11 +23 + 28
Լոռի	+9 + 14 +23 + 27
Տավուշ	+12+ 17 +27 + 30
Արագածոտնի լեռներ	+9 + 12 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+15+ 18 +27 + 31

Արարատ	+17 + 20 +33 + 35
Արմավիր	+15 + 18 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 11 +25 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 +32 + 35
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +29 + 32
ԼՂՀ	+13 + 16 +27 + 31
Երեւան	+24 + 26 +30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*